

Հաստատված է «Ունեսա» ՓԲԸ  
բաժնետերերի արտահերթ  
ընդհանուր ժողովում  
«11» հոկտեմբերի 2010թ..  
Ժողովի նախագահ՝  
Է. Մարության \_\_\_\_\_

**«ՈԵՆԵՍԱ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԱՐԺԵԹՊԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ԵՐԵՎԱՆ 2010թ.

«Ունեսա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հաճախորդներին արժեքողերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցումն կարգավորող սույն Կանոնակարգը չշակված է համաձայն «Արժեքողերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի և ՀՀ Կենտրանական Բանկի նորմատիվ իրավական ակտերի:

## 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

«Արժեքողերի փաթեթի կառավարում» - կառավարչի կողմից իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեքողերի, արժեքողերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, արժեքողերի փաթեթի կառավարման հետևանքով ստացված արժեքողերի և դրամական միջոցների կառավարումը՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն:

«Փաթեթի կառավարիչ» - անձ (Սույն կանոնակարգի առումով «Ունեսա» ՓԲԸ-ն), որը արժեքողերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն իրականացնում է արժեքողերի փաթեթի կառավարում՝ ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի).

«Կառավարման հիմնադիր» - անձ, որն իրեն սեփականության իրավունքով պատկանող, բացառությամբ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով սահմանված դեպքերի, արժեքողերը և/կամ արժեքողերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները՝ ակտիվները, հանձնում է փաթեթի կառավարչին:

«Շահառու» - անձ ի շահ որի իրականացվում է փաթեթի կառավարումը: Շահառուն կարող է լինել նաև Կառավարման հիմնադիրը:

«Հաճախորդ» - անձ, որի հետ Ընկերությունը կնքել է կամ նախատեսում է կնքել արժեքողերի փաթեթի կառավարման պայմանագրի և որը հանդիսանում է Կառավարման հիմնադիր:

«Ներդրումային հայտարարագիր» - արժեքողերի փաթեթի կառավարման պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող փաստաթուղթ, որն արտացոլում է Կառավարման հիմնադրի արժեքողերի և/կամ արժեքողերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցների կառավարման ու ներդրման ուղղությունները և դրանց կառուցվածքը, ինչպես նաև տեղեկություններ արժեքողերի շուկայում գործարքների իրականացնելու հետ կապված ոխակերի վերաբերյալ:

«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց» - ցանկացած միջոց, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված

տեղեկատվությունը, և որը հետազայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

## 2. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1. Փաթեթի կառավարիչը արժեթղթերի և/կամ դրամական միջոցների կառավարումն իրականացնում է արժեթղթերի շուկայում:
- 2.2. Արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնելը չի հանգեցնում փաթեթի կառավարչին դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը:
- 2.3. Կառավարման հանձնված արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները առանձնացվում են կառավարչի արժեթղթերից և դրամական միջոցներից և **պահպում են հատուկ հաշվի վրա:**
- 2.4. Արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները փաթեթի կառավարման հանձնելը հանգեցնում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրով սահմանված ժամկետով փաթեթի կառավարչին դրանց նկատմամբ օգտագործման և տնօրինման իրավունքի տրամադրմանը, եթե սույն կանոններով կամ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրով մասնակի կամ ամբողջությամբ չի սահմանափակվում այդ իրավունքներից որևէ մեկը:
- 2.5. Արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնելու համար բավարար հիմք է հանդիսանում գրավոր ձևով կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիրը:
- 2.6. Արժեթղթերի փաթեթի կառավարումը իրականացվում է Ներդրումային հայտարարագրում սահմանված ներդրումային սխեմայի հիման վրա: Ներդրումային հայտատրարգիրը հանդիսանում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի անբաժանելի մասը:
- 2.7. Մինչև արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի կնքումը Փաթեթի կառավարիչը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ և իրականացնում ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 4/07-ով սահմանված պահանջները:

## 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ

- 3.1. Արժեքության կառավարման օբյեկտ կարող են լինել՝
- 3.1.1. արժեքություն ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցները (կանխիկ և/կամ ոչ կանխիկ արժույթը).
- 3.1.2. Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրենքով սահմանված կարգով բողարկված և շրջանառվող արժեքությունը, բացառությամբ եթե դրանց բողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է դրանց արժեքությունը կառավարման օբյեկտ լինելը.
- 3.1.3. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բողարկված և Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրենքով սահմանված կարգով շրջանառվող արժեքությունը, բացառությամբ, եթե դրանց բողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է արժեքությունը կառավարման օբյեկտ լինելը.
- 3.1.4. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բողարկված և շրջանառվող արժեքությունը, բացառությամբ եթե դրանց բողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է արժեքությունը կառավարման օբյեկտ լինելը:

#### **4.ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԶԵՎՀԸ**

- 4.1. Փաթեթի կառավարիչը հաճախորդի կողմից ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը պարզելու նպատակով հաճախորդից կարող է պահանջել տեղեկություններ համաձայն համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 4/07-ի 7-րդ գլուխ՝
- ֆինանսական վիճակի վերաբերյալ
  - ներդրումային նպատակների վերաբերյալ տեղեկություններ
  - ներդրումային գործունեության բնագավառում նրա գիտելիքների և փորձի վերաբերյալ
1. Ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.
    - 1) կանոնավոր եկամտի աղբյուրները և մեծությունը,
    - 2) ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները,
    - 3) ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ.
    - 4) կանոնավոր ֆինանսական արտահոսքերը:
  2. Ներդրումային նպատակների մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.
    - 1) այն ժամանակահատվածը, որի ողջ ընթացքում հաճախորդը
    - 2) ցանկանում է պահել այդ ներդրումը,
    - 3) ռիսկերի նկատմամբ իր նախապատվությունը և դրանց շրջանակը,
    - 4) կատարվող ներդրման նպատակը :

3. Ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.
- 1) տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեքութերով գործարքների և արժեքութերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է հաճախորդը,
  - 2) հաճախորդի կողմից արժեքութերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները,
  - 3) հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:
- Սույն գլխի 1-ին կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ1-ով «Հաճախորդի հարցաքերթիկ» ձևին համապատասխան :
- 4.2. Փաթեթի կառավարիչի հետ համատեղ հաճախորդը որոշում է ոխսի ընդունելի աստիճանը, որով հետագայում ձևավորվում և կառավարվում է վերջինիս արժեքութերի փաթեթը:
- 4.3. Հաճախորդի կողմից պահանջվող տեղեկությունները չտրամադրելու դեպքում Փաթեթի կառավարիչը գգուշացնում է հաճախորդին, որ նման վարքագծի արդյունքում հնարավոր չէ հաճախորդին առաջարկել այնպիսի ծառայություններ, որոնք առավելագույնս համապատասխանում են վերջինիս ցանկությանը: Փաթեթի կառավարիչը կարող է հիմնվել հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

## 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- 5.1. Արժեքութերի փաթեթի կառավարումն իրականացվում է արժեքութերի փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա( այսուհետ՝ Պայմանագիր):
- 5.2. Փաթեթի կառավարիչն իրավունք ունի կնքել Պայմանագիր արժեքութերի փաթեթի կառավարման հանձնման ենթակա արժեքութերի և/կամ արժեքութերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցների սեփականատիրոջ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 968 հոդվածով նախատեսված դեպքերում՝ այլ անձի հետ:
- 5.3. Սինչև Պայմանագիր կնքելը Փաթեթի կառավարիչը պարտավոր է.
- 1) հաճախորդին ընձեռել արժեքութերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող սույն Կանոնակարգին ծանոթանալու հնարավորություն.

- 2) պարզել հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը.
- 3) հաճախորդից պահանջել ներդրումային գործունեության բնագավառում նրա գիտելիքների և փորձի, ինչպես նաև ներդրումային նպատակների վերաբերյալ տեղեկություններ, հաճախորդի ֆինանսական վիճակի վերաբերյալ՝ համաձայն սույն Կանոնակարգի 5-րդ գլխի.
- 4) հաճախորդին տեղեկացնել արժեքրդերի ձեռքբերման, հաշվառման, օտարման և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դրանց հետ կապված ռիսկերի մասին, ներդրողների պաշտպանության կիրառելի մեխանիզմների մասին (առկայության դեպքում), ինչպես նաև հաճախորդին տրամադրել ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ՝ հաշվի առնելով հաճախորդի՝ ներդրումների բնագավառում ունեցած փորձը և գիտելիքները, ինչպես նաև կառավարման օրիենտ հանդիսացող արժեքրդերի գինը և ծավալը.
- 5) տրամադրել տեղեկություններ ծախսերի, պարզեավճարի և միջնորդավճարների վերաբերյալ.
- 6) հաճախորդին տեղեկացնել շահերի բախման քաղաքականության համառոտ նկարագիրը, իսկ վերջինիս պահանջի դեպքում՝ տրամադրել տեղեկություն շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագրի վերաբերյալ.
- 7) տեղակացնել հաճախորդին արժեքրդերի փաթեթի գնահատման մեթոդի և հաճախականության մասին.
- 8) տեղեկացնել հաճախորդին այն հենանիշի առանձնահատկությունների վերաբերյալ, որի հետ պետք է համեմատվի կառավարման արդյունավետությունը (եկամտաբերությունը).
- 9) տրամադրել տեղեկություններ այն արժեքրդերի տեսակների վերաբերյալ, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում, և այն գործարքների, ներառյալ սահմանափակումների վերաբերյալ, որոնք կարող են իրականացվել այդ արժեքրդերով կառավարման շրջանակներում:
- 5.4. Փաթեթի կառավարիչը Պայմանագրի շրջանակներում իրավունք ունի արժեքրդերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակներում ընդունել արժեքրդեր և/կամ արժեքրդերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցներ, բացառությամբ սույն գլխի 5.5. կետով սահմանված դեպքերի:
- 5.5. Եթե Պայմանագրով նախատեսվում արժեքրդերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար հանձնել միայն արժեքրդերի նկատմամբ օգտագործման իրավունքը՝ մասնակի կամ ամբողջությամբ, ապա այս դեպքում փաթեթի կառավարչին արգելվում է.

- 1) արժեքողերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար ընդունել արժեքողերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցներ.
- 2) տնօրինել արժեքողերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար հանձնված արժեքողերը, եթե այլ բան նախատեսված չէ փաթեթի կառավարման պայմանագրով:

5.6. **Պայմանագիրը պետք է ներառի.**

- 1) Փաթեթի կառավարչի, հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառողի) իրավունքներն ու պարտականությունները,
- 2) արժեքողերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար հանձնման ենթակա արժեքողերի և/կամ արժեքողերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցների փոխանցման պայմաններն ու կարգը.
- 3) Փաթեթի կառավարչի, հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառողի) ինքնության վերաբերյալ տեղեկություններ, հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ.
- 4) Փաթեթի կառավարչի կողմից հաճախորդին (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառողին) հաշվետվությունների տրամադրման կարգը.
- 5) Փաթեթի կառավարչին արժեքողերի փաթեթի կառավարման համար վարձատրության չափի հաշվարկման կարգը.
- 6) պայմանագրի լուծման կամ ավարտման դեպքում կառավարման օբյեկտները հաճախորդին կամ շահառողին վերադարձնելու պայմաններն ու կարգը.
- 7) պայմանագրի շրջանակներում փաթեթի կառավարչի և հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառողի) առաջացող վեճերի լուծման կարգը.
- 8) կառավարման պայմանագրի ուժի մեջ մտնելու, փոփոխելու և լուծելու պայմաններն ու կարգը, գործողության ժամկետը.
- 9) շահերի բախման մասին տեղեկացման կարգը.
- 10) օրենքով և իրավական ակտերով նախատեսված պարտադիր այլ պայմաններ, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 4/07-ի 38-րդ կետով սահմանված այլ պահանջներ:

5.7. **Պայմանագիրը պետք է ներառի նաև ներդրումային հայտարարագիրը, բացառությամբ, եթե պայմանագրով նախատեսվում է արժեքողերի փաթեթի կառավարման համար հանձնել միայն արժեքողերի օգտագործման իրավունքը՝ մասնակի կամ ամբողջությամբ:**

5.8. **Եթե Պայմանագրի համաձայն արժեքողերը և/կամ արժեքողերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները նախատեսվում է Փաթեթի կառավարչին հանձնել տարբեր ժամկետներում, ապա արժեքողերի փաթեթի կառավարման**

պայմանագիրը գործում է միայն փոխանցված արժեքութերի և/կամ արժեքութերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցների մասով՝ Փաթեթի կառավարչի կողմից ստանալու պահից:

- 5.9. Պայմանագրով հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին հանձնված արժեքութերի և/կամ արժեքութերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցների արժեքութերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման արդյունքում ստացվող արժեքութերը և/կամ դրամական միջոցները, առանց Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Փաթեթի կառավարչի կողմից ստանալու պահից դառնում են արժեքութերի փաթեթի կառավարման օբյեկտ, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով կամ արժեքութերի փաթեթի կառավարման պայմանագրով:
- 5.10. Եթե արժեքութերի փաթեթի կառավարման են հանձնվում փոխառությամբ վերցված արժեքութեր և/կամ արժեքութերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցներ, ապա արժեքութերի փաթեթի կառավարման պայմանագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել փոխառության ժամկետը:
- 5.11. Պայմանագիրը կարող է հաճախորդի կողմից միակողմանիորեն լուծվել՝ Փաթեթի կառավարիչին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ **3 աշխատանքային օրվա ընթացքում**, Փաթեթի կառավարիչը պարտավոր է հաճախորդին կամ նրա ներկայացուցիչն փոխանցել հաճախորդին պատկանող արժեքութերն ու դրամական միջոցները, բացառությամբ այն ակտիվների, որոնք Կառավարչի՝ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի ուժով ենթակա են վերադարձան Կառավարչին ավելի ուշ ժամկետի ընթացքում, ընդ որում, նշված ակտիվները վերադարձվում են Հիմնադրին Կառավարչի կողմից դրանք երրորդ անձանցից ստանալուն զուգընթաց, դրանցից յուրաքանչյուրի ստացումից 1 աշխատանքային օրվա ընթացքում: Ակտիվները Հիմնադրին վերադարձվում են նրա կողմից գրավոր ժանուցմամբ՝ նշված հաշիվներին փոխանցելու միջոցով, ինչից հետո ըստ հավատարմագրային կառավարման պայմանագրի՝ կազմվում է հանձնման-ընդունման ակտ:

## 6.ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

- 6.1. Ներդրումային հայտարարագիրը Պայմանագրի անբաժանելի մասն է և սահմանում է արժեքութերի փաթեթի կառավարման ներդրումային ռազմավարությունը, ներդրումային պորտֆելի կազմն ու կառուցվածքը: Ներդրումային հայտարարագրի դրույթները պարտադիր են փաթեթի կառավարչի կողմից արժեքութերի փաթեթի կառավարման պայմանագրի մյուս դրույթների հետ հավասար հիմքերով պատշաճ կատարման համար: Փաթեթի կառավարիչը չի կարող ձեռնարկել ներդրումային հայտարարագրին հակասող գործողություններ :

- 6.2. Ներդրումային հայտարարագիրը կազմվում է համաձայն Հավելված 2-ի և պետք է պարունակի
- 1) արժեթղթերի փաթեթի կառավարման բաղաքանությունը, ուղղությունները, պայմանները /այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները/ և նպատակը, որոնք բխում են հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանից.
  - 2) ձեռքբերման ենթակա արժեթղթերի կազմի և կառուցվածքի սահմանափակումները (տարրեր տեսակի արժեթղթերի միջև հարաբերակցությունը):
- 6.3. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի ավարտից հետո արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի կողմերից որևէ մեկի կողմից ներդրումային հայտարարագրի փոփոխման վերաբերյալ գրավոր պահանջի չներկայացման դեպքում տվյալ ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված մինչև արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:
- 6.4. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի սահմանումը չի կարող արգելվ հանդիսանալ նշված ժամկետի ընթացքում ներդրումային հայտարարագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, այդ թվում՝ որոշակի ժամկետով այն կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նման գործողությունները բխում են հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառուի) շահերից:
- 6.5. Ներդրումային հայտարարագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվում են լրացուցիչ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կցվում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրին:

## 7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

- 7.1. Փաթեթի կառավարիչը հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը պարզելուց և ներդրումային հայտարարագիրը կազմելուց հետո, որպես արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի բաղկացուցիչ մաս, պարտավոր է գրավոր ձևով հաճախորդին տեղեկացնել արժեթղթերի փաթեթի կառավարման ռիսկերի մասին՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 3-ի :
- 7.2. Փաթեթի կառավարիչը, հաճախորդին արժեթղթերի փաթեթի կառավարման ռիսկերի մասին տեղեկացնելուց հետո, պարտավոր է մոնիթորինգի ենթակել արժեթղթերի փաթեթի կառավարման հետ կապված ռիսկերը: Մոնիթորինգի արդյունքում ռիսկերի վերաբերյալ բացահայտված ցանկացած փոփոխություն կամ

հնարավոր փոփոխություն (այդ թվում՝ ռիսկերի նոր տեսակների ի հայտ գալը), որը կարող է գերազանցել հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը, ապա փաթեթի կառավարիչը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում պատշաճ ձևով տեղեկացնել հաճախորդին նման փոփոխության վերաբերյալ:

- 7.3. Արժեքորդերի փաթեթի կառավարման հետ կապված ռիսկերի մասին տեղեկացումը, ինչպես նաև դրա փոփոխությունների վերաբերյալ ցանկացած տեղեկացումը կցվում է արժեքորդերի փաթեթի կառավարման պայմանագրին՝ որպես այդ պայմանագրի բաղկացուցիչ մաս:

## **8.ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԴՐԱՍՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ**

- 8.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է արժեքորդերի փաթեթի կառավարման ծառայության շրջանակներում ընդունված դրամական միջոցները հաշվառել իր միջոցներից առանձին:
- 8.2. Արժեքորդերի Փաթեթի կառավարիչը պարտավոր է կառավարման համար փոխանցվող կամ կառավարման արդյունքում ձեռք բերված արժեքորդերի հաշվառման և վարման համար համապատասխան պահառուի մոտ բացել արժեքորդերի հատուկ հաշիվ, որը նախատեսված կլինի կառավարման ընդունված արժեքորդերի փաստացի հաշվառման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեքորդերի փաթեթի կառավարման պայմանագրով նախատեսվում է արժեքորդերի փաթեթի կառավարման ծառայությունների շրջանակում հանձնել միայն արժեքորդերի նկատմամբ օգտագործման իրավունքը՝ մասնակի կամ ամբողջությամբ:
- 8.3. Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է կառավարչի կողմից այդ նպատակի համար որոշված բանկային հատուկ հաշվի վրա կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով:
- 8.4. Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին արժեքորդերի փոխանցումը իրականացվում է վերջինիս կողմից բացված արժեքորդերի հատուկ հաշվի վրա փոխանցման միջոցով: Եթե արժեքորդերի փաթեթի կառավարման պայմանագրով նախատեսվում է հավատարմագրային կառավարման հանձնել միայն արժեքորդերի նկատմամբ օգտագործման իրավունքը՝ մասնակի կամ ամբողջությամբ, ապա տվյալ արժեքորդերի սեփականատերերի ռեստրում հավատարմագրային կառավարչի մասին համապատասխան գրառում պետք է իրականացվի:

- 8.5. Փաթեթի կառավարչի կողմից դրամական միջոցները ստացված են համարվում նրա բանկային հատուկ հաշվին փոխանցման կամ կանխիկ ձևով մուտքագրման պահից:
- 8.6. Փաթեթի կառավարչի կողմից արժեթղթերը ստացված են համարվում արժեթղթերը՝ համապատասխան հատուկ հաշվին փոխանցման կամ տվյալ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում հավատարմագրային կառավարչի մասին համապատասխան գրառման կատարման պահից:
- 8.7. Կառավարման հիմնադիրը կարող է հավատարմագրային կառավարման համար տրամադրել լրացուցիչ ակտիվներ պայմանագրի գործունեության ժամկետում, որը ձևակերպվում է ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի համաձայն ձևակերպված «Հանձնման-ընդունման ակտով»:

## 9. ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

9.1. Փաթեթի կառավարչին արգելվում է.

- 1) արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող կանոնների պահանջների խախտմամբ արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեություն իրականացնել, այդ թվում՝ հաճախորդի հետ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիր կնքել.
  - 2) արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի (առկայության դեպքում՝ նաև ներդրումային հայտարարագրի) խախտմամբ կատարել գործարքներ.
  - 3) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունել արժեթղթեր, որոնք չեն կարող լինել արժեթղթերի փաթեթի կառավարման օրինակությունը.
  - 4) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված դրամական միջոցների հաշվին ձեռք բերել լուծարման գործընթացում գտնվող, այդ թվում՝ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց կողմից թողարկված արժեթղթերը.
  - 5) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված արժեթղթերը գրավ դնել կամ դրանցով ապահովված երաշխիքներ տալ առանց հաճախորդի հետ կնքված գրավոր համաձայնության.
  - 6) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված արժեթղթերը և/կամ դրամական միջոցները ցանկացած կերպ օգտագործել երրորդ անձի օգտին կամ դրանց տնօրինման իրավունքը պատվիրակել երրորդ անձի առանց հաճախորդի հետ կնքված գրավոր համաձայնություն և/կամ օրենքով սահմանված կարգով:
- 9.2. Եթե Փաթեթի կառավարչի և նրա հաճախորդի կամ փաթեթի կառավարչի տարբեր հաճախորդների միջև առկա է կամ հնարավոր է շահերի բախում, որի մասին կողմերը նախօրոք տեղյակ չեն եղել, ապա Փաթեթի կառավարիչն իրավունք չունի առանց հաճախորդի նախնական համաձայնությունը ստանալու կնքել գործարքներ, որոնց

համար արժեքութերի փաթեթի կառավարիչը օգտագործում է բացառապես իր կողմից արժեքութերի փաթեթի կառավարման համար ընդունված միջոցները:

- 9.3. Փաթեթի կառավարչի կողմից իր հաշվին գործարքներ կատարելիս հաճախորդի շահերից և ներդրումային հայտարարագրի պահանջներից բխող արժեքութերի փաթեթի կառավարման համար ընդունված արժեքութերով և/կամ դրամական միջոցներով կատարվող գործարքներն ենթակա են առաջնահերթ կատարման:
- 9.4. Հաճախորդների հաշիվներով գործարքներ իրականացնելու պատվեր տեղադրելիս փաթեթի կառավարիչը պետք է գործարքներն արդար ձևով բաշխի այնպես, որ որոշ հաճախորդներ չստանան արտոնյալ վերաբերմունք և չստացվի այնպես, որ նրանց հաշիվներով գործարքներն իրականացվում են առաջին հերթին: Արժեքութերում ներդրումներ իրականացնելիս փաթեթի կառավարիչը պետք է ապահովի, որ մասնակցության հնարավորություն տրվի այն բոլոր հաճախորդներին, որոնց համար տվյալ արժեքութքը նպատակահարմար է և/կամ նախատեսված է ներդրումային հայտարարություն: Եթե արժեքութերի փաթեթի կառավարիչի ձեռք բերված տեղաբաշխման ծավալն այնքան մեծ չէ, որ ապահովվի բոլոր հաճախորդների լիարժեք մասնակցությունը տվյալ առաջարկում, ապա փաթեթի կառավարիչը պետք է կանխի որոշակի հաճախորդներին արտոնյալ վերաբերմունք ցուցաբերելու հնարավորությունը և արժեքութերում ներդրում կատարի ըստ հաճախորդների միջև համամասնորեն:

## 10. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 10.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է ցանկացած պահին հաճախորդի պահանջով, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ իր հաճախորդին պատշաճ ձևով հաշվետվություն տրամադրել նրա արժեքութերի փաթեթի արժեքի, կառուցվածքի և դրա կառավարման շրջանակներում հաճախորդի միջոցներով կնքված գործարքների մասին, ինչպես նաև ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված այլ հանգամանքների վերաբերյալ՝ արժեքութքերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերին և հաճախորդի հետ կնքված արժեքութերի փաթեթի կառավարման պայմանագրին համապատասխան՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 5-ի, որն առնվազն պետք է ներառի.

- 1) ներդրումային ծառայություն մատուցող անձի անվանումը,
- 2) հաճախորդի արժեքութերի կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը,
- 3) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում՝
  - ա. փաթեթում ընդգրկված արժեքութերի ցանկը և փաթեթի արժեքը, ներառյալ փաթեթում ընդգրկված յուրաքանչյուր արժեքութերի իրական արժեքը,

բ. հաճախորդի դրամական միջոցների հաշվեկշիռը,

- 4) արժեքության փաթեթի տարեկան եկամտաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում,
  - 5) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարները՝ տալով դրանց մացկածքը առնվազն ըստ կառավարման դիմաց գանձվող վճարի և գործարքների կնքման համար կատարված ծախսերի,
  - 6) կառավարման եկամտաբերության համեմատումը հաճախորդի հետ նախապես համաձայնեցված հենանիշի հետ (նման հենանիշի առկայության դեպքում),
  - 7) հաշվետու ժամանակաշրջանում արժեքության փաթեթում ներառված արժեքության գծով ստացված շահութաբաժինները, տոկոսները և այլ վճարները,
  - 8) արժեքության փաթեթում ներառված արժեքության գծով կորպորատիվ գործողությունները (արժեքության փոխարկումը՝ բողարկողի տվյալ դասի արժեքության բաժանման, կոնսոլիդացիայի կամ բողարկողի վերակազմակերպման արդյունքում),
- 10.2. Ի լրումն 10.1. կետում նշված հաշվետվության, փաթեթի կառավարիչը հաշվետու ժամանակաշրջանում պարտավոր է նաև ցանկացած պահին հաճախորդի պահանջով վերջինիս տրամադրել արժեքության փաթեթի կառավարման շրջանակներում կնքված գործարքների մասին հաշվետվություն համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 6-ի: Եթե հաճախորդը նախընտրել է ստանալ այդ տեղեկատվությունը նաև ըստ յուրաքանչյուր գործարքի, ապա փաթեթի կառավարիչը պետք է նրան տրամադրի տվյալ գործարքի մասին հաշվետվություն՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ի, անհապաղ սակայն ոչ ուշ գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը :

- 10.3. Արժեքության Փաթեթի կառավարիչը հաճախորդին հաշվետվությունը տրամադրում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Հաճախորդին ներկայացվող փաթեթի կառավարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է ՀԱՎԵԼՎԱԾ 6-ի համաձայն լրացված տեղեկությունները: Եթե հաճախորդը նախընտրել է ստանալ փաթեթի կառավարման մասին հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր գործարքի, ապա տարամադրվում է ՀԱՎԵԼՎԱԾ 7-ի համապատասխան կազմված հաշվետվություն:

- 10.4. Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունը հաճախորդին կարող է տրամադրվել.

- 1) էլեկտրոնային փաստաթղթի ձևով, կամ
- 2) իրապարակային էլեկտրոնային կապի միջոցով՝ պատշաճ ձևով տեղեկացնելով հաճախորդին.

- 10.5. Թղթային եղանակով հաշվետվությունը հաճախորդին կարող է տրամադրվել.

- 1) առձեռն՝ ստացականի միջոցով.
- 2) փոստային կապի միջոցով.

3) Փաքսիմիլային կապի միջոցով՝ հավաստիանալով, որ հաշվետվությունը ստացվել է հաճախորդի կողմից.

10.6. Թղթային եղանակով հաշվետվության տրամադրման դեպքում, հաշվետվությունը պետք է.

1) Վավերացված լինի փաթեթի կառավարչի գործադիր մարմնի ղեկավարի (նման իրավասություն ունեցող անձի) և գիսավոր հաշվապահի (նման իրավասություն ունեցող անձի) ստորագրություններով և հավատարմագրային կառավարչի կնիքով.

2) Աներառի 10.6-ի 1-ին ենթակետով նշված անձանց կողմից ստորագրման ամսաթվերը:

10.7. Արժեթղթերի փաթեթի կառավարչի լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցումը հիմք չէ հաշվետվությունը հաճախորդին չտրամադրելու համար:

10.8. Հաշվետվությունը պետք է պարունակի ստույգ տեղեկություններ՝ առանց որևէ էական փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:

## 11.ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակում յուրաքանչյուր ներդրումային որոշման (գործարք կատարելու ներքին պատվերի) մասին, պետք է կատարի գրանցումներ, ներդրումային որոշման կայացման պահից անհապաղսակայն ոչ ուշ քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 8-ի, որոնք առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները.

- 1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
- 2) որոշման մեջ նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- 3) որոշման բնույթը, եթե որոշման մեջ նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- 4) որոշման համաձայն տրվող պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- 5) արժեթղթի տարբերակի ծածկագիրը (բացակայության դեպքում՝ բողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- 6) արժեթղթի քանակը,
- 7) միավորի գինը,
- 8) ընդհանուր ծավալը,
- 9) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
- 10) ներդրումային որոշման կայացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
- 11) ներդրումային որոշումը կայացնող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

## **12. ՆԵՐՁԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 12.1. Արժեքության համապատասխան պարտավոր է հավատարմագրային կառավարման պայմանագրի լուծումից հետո առնվազն 7 տարի ժամկետով պահպանել.
- 1) արժեքության փաթեթի կառավարման պայմանագիրը, այդ թվում՝ դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև կից փաստաթղթերը.
  - 2) արժեքության փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա փաթեթի կառավարչին արժեքության և/կամ դրամական միջոցների փոխանցման և հաճախորդին (անհրաժեշտության դեպքում՝ շահառուին)
  - 3) վերադարձման, ինչպես նաև հավատարմագրային կառավարման ընդունված արժեքությունը և/կամ դրամական միջոցներով կատարված գործարքների վերաբերյալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը.
  - 4) հավատարմագրային կառավարչի կողմից հաճախորդին տրամադրված ցանկացած հաշվետվության պատճեն՝ անկախ դրա տրամադրման ձևից:
- 12.2. Փաթեթի կառավարիչը պարտավոր է փաստաթղթերի պահպանման ընթացքում արժեքության փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա հանդես եկող հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառուի) առաջին իսկ պահանջով նրան տրամադրել սույն կետի (ա) ենթակետով սահմանված փաստաթղթերի պատճենները:

## **12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Սույն Կանոնակարգում կատարված փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո: